

ՔԱՆՎԱՆՈՐԴ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Ուղարկող հասցեական

Տարեկան

Վեցամսեայ

Առաստանակա՛ն հա-

մար տարեկան 12 »

Վեցամսեայ 6 »

ԿԱՆԻՒԿՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ

—)(—

Դրոսթիւնի և չիւն սրույր


—)(—

Դրանուցման տողը 20 սան-

րիւն է. Երեկոն աւելի աւել-

ցումներու համար 20 Օ10

գեղջ կրուայ :



R. P. Kalinikow
(Austria)
Mechitharistengasse IV.
Vienne

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ


(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՄԱՏԱՍԽԱՆՍՈՒ 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նամակ եւ դրամ դրկիլ
Խմբագրութեան հասցիքը

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)



ԿԵՆԴԱՆԻ ԸՆԿԱԾՆԵՐ

—)(—

Վերջին երկու երեք տարվայ մէջ մեր կեանքում երեւան եկան մի նոր տեսակի տիպեր, որոնք երբեմն յեղափոխական են եղել, բայց այսօր ոչինչ, կամ անորոշ և անորակելի են: Այս տիպերը մեր այն յեղափոխականներից են, որոնք առանց ըմբռնելու յեղափոխական կեանքի բարդութիւնները, առանց ծանօթանալու ազատութեան գործի անտանելի գոյացումներին հետ, լոկ զգացմունքից գրգռված, ոգեւորող վայրկեանի ազդեցութեան տակ, մտել, գուցէ և ազնւաբար նետվել են հայկական յեղափոխութեան մէջ, յուսալով որ շուտով կը վերջանար ազատութեան գործը, և իրենք իբր ազատութեան համար մարտնչող հերոսներ, փասքով ու պատով կապրէին ազատ հայրենիքում...

Սակայն, կատաղած բռնաւորի զօրեղ հարածները, յեղափոխականին վիճակված չափազանց բարդ ու անտանելի պայմանները օղբ ցնդեցրին այս երազող յեղափոխականների վարդապոյն յոյսերը. այդ բաւական չէր վրա հասաւ և հակայիղափոխական, մտքով հոգով սարուկ հայ տարրը իր անէծքով, հայհոյանքով և լուստանքով երազող և վայրկեանի ծնունդ յեղափոխականը չը դիմացաւ այդ գրոհին, տառապնեց, ընկճվեց և կասկածեց իր նախկին գործունէութեան օգտակարութեան մէջ, սկսեց գնահատել իր կեանքը, հանդատութիւնը և վերջի վերջոյ կամ յեղափոխութեան թշնամիների բանակը անցաւ, կամ ամաչելով բոլորովին հրաժարվել իր երեկվայ պաշտած գործից՝ կեսց քննադատել, ներկայ լեզուով հայհոյել, բոլոր յեղափոխական մարմինները և նոր կուսակցութիւն սեղծելու աննշով այրվել: Ահա այս տիպերն են որ չը դիմացան յեղափոխական կուռի անտանելի

պայմաններին և ներկայացնում են մեր ազատութեան մարտի դաշտում կենդանի ընկածները...

Այդ փախտական յեղափոխականները, վհատված և թուլահոգի արարածները ցրված են ազատ երկիրներու մէջ, հրացան արձակելու լիսարէն ճառեր են արտասանում սրճարանների մէջ, փողոցներում և իրանց ամօթալի փախուստը ծածկելու համար, իրանց սասածներին ոյժ տալու մտքով հայհոյանքներ տեղացնում կուռի դաշտում հերոսաբար, գէնքը ձեռքին ընկած հերոսների հասցէին, սրբապաշտում այն հայ ելիսաւարդների յիշատակը, որոնք իրանց վոսմ մահով զոհն է մի չափով թէ մեկ և թէ օտարին համադեցին, որ հայ սարուկ ժողովուրդը կարող է ծնել ամենազօրեղ և ասպետական ազդին վայել և արմանի զուակները...

Այս տեսակ, փախտական, ուխտագրուած, վհատված, բայց զանազան տար միտումներով գործը և անազարտ ու անձնուէր գործիչներին դատապարտող և զրպարտող տիպերը աւելի շրջվելի և հալածանքի արժանի են, քան Երոսպայում ապրող, հաճոյքի վաւակ դրաղէտ բանաստեղծները, որոնք սին փառքի, աժան ժողովրդականութեան և զեղին ոսկիների ծարաւ յագեցնելու համար, պա՛րակում են ներուէս, Բաֆֆի և ամբողջ հայ յեղափոխական տարրը, լուրջ քննադատի հովեր առնելով և սգաւոր ազգասէրի դիմակ հագնելով: Այսպիսիներին բաւական է որ իր պատրոնները դըրամ տան «կաֆէ-շանտանդներ» համար, այնտեղ ամեն ինչ կը մոռանան և մեղ չեն ձանձրացրնի: Բայց փախտական և վհատված, իրանց փորը կշտացնելու, իրանց ամօթը ծածկելու միտումով երկպառակութիւն սերմանող, հայկական յեղափոխութիւնը հայհոյող, հայ ժողովրդի ազատութեան համար կեանքերը արդէն զոհած հերոսների յիշատակը սրբապաշտողներին պէտք

է պատժել և ամենախիստ կերպով, ոչ գնդակով, որովհետեւ գրանք գնդակի արժանի չեն այլ բարոյական մահով, նրանց ամեն պատուաւոր հասարակութիւնից դուրս վանելով և բացարձակապէս արհամարհելով...

ՎԱՐԿՈ

ԻՇԽԱՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ ՁԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

—)(—

Մեր այսօրուան թուով կը հըրատարակենք Իշխան Լուսինեանի մի նամակը, որը շրկված է Պէրլինի Դաշնագրութիւնը ստորագրող Մեծ տէրութիւններու պետերուն և քաղաքական նշանաւոր գործիչներուն:

Մենք գնահատելով մէկտեղ մեր հայ իշխանի այս քայլը և անոր նամակի քաղաքագիտական իսկական արժէքը, իր ուշադրութիւնը կը դարձնենք այն կէտի վրայ, որ կրէտէի ազատութիւնը, որուն կակնազկէ իր գրութեանը մէջ, ձեռք բերուեցաւ, ո՛չ թէ Մեծ պետութիւններու խաղաղ և բարեհաճ միջամտութիւնով, այլ շնորհիւ իր քաջարի վաւակներուն տուրու և ապստամբութեանը: Անշուշտ իշ. Լուսինեան կը յիշէ գեւոր այդ մեծ պետութիւնները, որոնց մարդասիրական զգացումներուն վրայ կը կրթի, քիչ ժամանակ առաջ պաշարման վիճակին երթարկեցին կրէտէն և նոյն իսկ ոմբակոծեցին ալ Բայց ողջամիտ կրէտացի ապստամբները չի յուսահատեցան, չի խաբուեցան և զէնքը ձեռքէ չը ձգեցին, մինչեւ որ տաճկական զօրքերը չի հեռացան, և Նորկիտս իշխանը կղզին չը հասաւ:

Այս է գէպի ազատութեան ձգտող ժողովուրդներու համար պատմութեան նորագոյն դասը, ասոր հետեւած է, և պէտք է շարունակել իր ճամբան հայ ժողովուրդն ալ:

Նորին Բարձրութեան, Տէր Նախագահին Ֆրանսական Հանրապետութեան:

Պարոն Նախագահ,

Ենորիւ եւրոպական Մեծ Տէրութեանց բարձր ու վեհանձն միջամտութեան թուրք և յունական խնդիրը հարթուած է: Քաղաքակրթիչ եւրոպայի պաշտպանութեան տակ, մաքրի խաղաղած են այս կէտին վրայ և կրէտական խնդիրը վերջապէս կընդունի միակ յարմար լուծումը, որ այս վայրկեանիս կղզեցուց ստուար մեծամասնութեան օրինաւոր յոյսերուն և շահերուն համաձայն ըլլայ:

Պատիւ ուրեմն Մեծ Ազգերուն, որոնք իրենց լիակատար իրաւունքովը իրենց կամքը քաղցուցին դադրեցնելու համար, վրդովման և խոտվութեանց թուական մը և վերահաստատելու կարգը և ապահովութիւնը, այնքան անհրաժեշտ խաղաղութեան պահպանման որքան մեծ ու փոքր տէրութեանց բարոյական ու նիւթական յատաշղիմութեան զարգացմանը:

Բայց եւրոպական դիւանագիտութեան այս բարբառատիկ արդիւնքին ծափահարած ատենս, թոյլ տուէք Պ. Նախագահ որ իմ ակնարկս, յիշատակներս և յոյսերս սեւեռին թուրքիոյ միւս ծայրը, դէպի Հաստանի այն քաջարի ժողովուրդը որուն այնքան երկար ատեն և օրինաւորապէս ծառայած են իմ նախնիքս, որուն մէջ տեղ ես ինքս կեանքիս մեծ մասը անցուցած եմ, որուն կը ծառայեմ կեանքիս ամեն վայրկեանին իմ աշխատութիւններովս և երկերով, և որ իրեն կը քաջ գիտ, թէ այն անդամանիլի զժողովութիւններովը որոնցմով ջամբուեցաւ, և թէ այն անուամբ զոր կը կրբեմ և որ արդէն մեծ պարտաւորութիւնները ստեղծէ ինձ համար անոր հանդէպ:

Հայաստանը, կրէտէն շատ աւելի տառապեցաւ և կը տառապի օսմանեան տիրապետութեան տակ եւ ամբողջ աշխարհ սաստկապէս յուզուեցաւ հայկական ջարդերու երկարատեւ շարքէն:

Հետո ինձմէ՛ք Պ. Նախագահ, տըխուր պատկերին յիշատակը ձեր մէջը զարթուցանելու մտածումը, ինչպէս նաեւ վերջին արիւննեղութիւններու, որ իմ հայրենակիցներէս աւելի քան 300,000, այր, կին ու երախայ, հալածուեցան ու սպանուեցան, որ հայու բնակարանները թատր հանդիսացան այնպիսի հրէշութեանց որոնցմէ մինչեւ

նոյն ատեն կոյս մնացած էր պատմութիւնը եւ որոնց տկար արձագանգները միայն մինչեւ ձեռք հասնելով, անշուշտ սոսկումի գոյ մը խլած են ձեռքէ :

Հետո ինձմէ նաեւ ձեր աչաց անջեւ պարզելէ այն տեղեկագրերը եւ մասնաւոր թղթակցութիւնները որոնք ինձ կը հասնին Հայաստանէ եւ որոնք նոյնքան ապացոյցներ են թէ ոճրագործութիւնները կը շարունակուին, թէ այն ցաւագին վէճերը որոնցմով ծածկուած է մեր սիրելի Հայաստանը՝ հեռի սպիանալէ, ա՛լ աւելի կը բացուին սակն օր, եւ թէ քիչ ատենէն, ինքնիմէն այնքան հպարտ եւ ուրիշներու իրաւունքին հանդէպ յարգալից այդ ժողովուրդը, որ կտակարանի աւանդութեամբ մեր մարդկութեան սկիզբն է, անթափանցելի գերեզմաննոցի մը պիտի վերածուի :

Գալով ատելութեան եւ թշնամութեան զգացումներուն որոնք այնքան արեւն թափել տուին, ասոնց զխաւոր սկզբնապատճառն է հայոց եւ թուրքերու ծագման, լեզուին եւ բարբերու մէջ եղած յոյժ նշանակելի տարբերութիւնը, եւ հետեւապէս երկու ազգերու միջեւ նկարագրի մը ցտակայ անհաշտելիութիւնը, աւելի եւս պիտի սաստկանայ թափուած արեան քանակութեան պատճառաւ : Անհնարին է խաղաղութիւն կնկարել, այլ թշնամութեան եւ ստեղծութեան անձու մը, որոնք պիտի ձենին ներքին պատերազմներու անընդհատ շարք մը, եւ պիտի փոխանցուին զրացի պետութեանց : Այս է մեր համոզումը որ հիմնուած է զէպքերու ուսումնասիրութեան եւ եղելով թեանց զգալիստարար անփոփոխ եւ արագ ընթացքին վրայ :

Գաղաքակրթեալ եւրոպան պիտի թոյլատրէ՞ այս չարիքին յարատեւումը եւ ծաւալումը, եւ անգամ մը եւս չի՞ պիտի ի կիր առնու ինչպէս կը տեսնենք մէջ, իր անվիճելի իշխանութիւնը՝ վնջելու համար թուրքիոյ եւ Հայաստանի մէջ գտնուող կոռուին պատճառները եւ զազրեցնելու համար արհաւիրացի հետեւանքները, Հայաստանը վերածելով ինքնօրէն ազգի մը, եւ կամ զէթ՝ սպասելով լաւագոյնին, Սուլթանի գերիշխանութեան տակ՝ անոր բարբերուն, ոգիին եւ շահերուն հետ աւելի հայտ օրէնքներ ընծայելով :

Արդէն այս կերպով է որ խնդիրը ըմբռնուեցաւ եւ տեսականօրէն լուծուեցաւ Պերլինի վեհաժողովին մէջ, ուր Թրանսան պաշտօնապէս ներքայացուցուած էր եւ ուր ժողովականները զգաճուած Հայաստանի ստատպանքներէն եւ անոր պատուիրակներուն՝ Վեհ. Խորհման կաթողիկոսի եւ Ամեն. Խորհման Արքեպիսկոպոս Իշխան Լուսինանի բողոքներէն, հանդիսաւոր Junusmal smին, յաւնու ժողովին մասնակցող Ազգերու, սոխպելու Թուրքիան որպէսզի հայկական նահանգներուն մէջ բարեկերտուեան լսցնէ :

Այս եղելութեանէն ետքը, մեծ պետութեանց մարդասիրական զգացումներուն վստահելով, համոզուած թէ ՅԵՂ յօդուածը ստորագրող կայսրերը, թագ որները, իշխանները եւ վարչիները՝ որոնք իրենց իրաւունքները կը հռչակէին, պիտի կրնային, եթէ հնար էր, զիւանագիտական ճանքանքով, պարտաւորել եւ դորձադրել տալ հարկաւոր ճանչցուած բարեկերտութիւնները, հայերը համբերութեամբ սպասելին աւելի հանդուրժելի վարչութեան մը գալուտեան : Բայց, ափսոս, Պերլինի վեհաժո-

ղովին ի վեր եւրոպա ուրիշ խնդիրներու ուսումնասիրութիւնովը եւ կարգադրութիւնովը զբաղեցաւ եւ Պոլսոյ կառավարութիւնը բնաւ հաշուի չառնելով Վեհաժողովին այնքան մեկին որոշումները, շարունակեց հալածել եւ ամենէն զարհուրելի թշուառութեան մասնել համօրէն հայ ազգը :

Թուրք զինուորները մոլիստանդութեան զրգուած շարունակեցին ջարդել ու կողոպտել անխնայ, բարբարոսական այնպիսի նորութիւններով, որոնց օրինակը չէ տեսնուած նոյն իսկ ամենէն վայրի ցեղերու մէջ :

Այսպէս, երբ կը մտածենք օսմանեան բարբարոսութեան ձեռքով հնձուած 300 000 զիւկններուն՝ այր, կին, զեռտախ աղվիկներ եւ մատաղ ժամուկներ, երբ մեր աչքին առաջ կը բերենք անելի եւ կրկնապէս քամակի զրու թիւեր որուն մէջ կը ձեռն մեր սիրելի Հայաստանը արիւնթաթախ, խոչտանգուած, մեր սիրտը անպատում եւ կծու ցաւով մը կը համակուի :

Գիւրազգածութիւնները վերաուրիշ վախճալով եւ միշտ մտախառն լուծման մը յուսով, մենք մինչեւ հիմա, լուեցնելով մեր զգացումները եւ զսպելով մեր վիշտերը, որոշ չափով վերապահութեամբ վարուեցանք : Բայց ցաւօք սրտի հաստատելով թէ այնքան օր նոյն կեղծքունները կը նորոգուին, թէ հայերուն վիճակը կը վատթարանայ, թէ անոնց կեանքը, ինչքը ու պատիւը միշտ վտանգի տակ են, ու չուզելով որ մեր լուսթիւնը սխալ մեկնուի, եւ յետոյ, ամէն կսով խնդրուած ըլլալով որ աւելի ուղղու կեղծք անենք մեր դժբախտ հայրենակիցներուն պաշտպանութիւնը, կուսանք, յանուն իրաւունքի եւ Մարդասիրութեան բողոքել նախ ձեռք մտա : Պ. Նախագահ, այն վարչութեան զէմ որուն ենթակուած են հայերը Հայաստանի մէջ, թուրք կառավարութեան ձեռքով, եւ խնդրել Պերլինի դաշնագրի ստորագրող անթութեանց սպիկցիկ միջամտութիւնը, ինչպէս տեղի ունեցաւ կրէտէի խնդիրը կարգադրելու համար, որպէսզի, եւրոպական զիւանագիտութեան ունեցած միջոցներով, կարելի ըլլայ ձեռք բերել, այնքան կրկար ատենէ ի վեր եւ վայրագօրէն հարստանալու հայերու նոր կեանք մը, որ կարենան ապրել ինչպէս բոլոր միւս քաղաքակրթեալ երկրներուն մէջ, արդա՛ր օրէնքներու պաշտպանութեան ներքեւ :

Եւ միթէ նոյն իսկ թուրքիոյ շահը չի՞ պահանջեր ընդունելու եւ բոլակական ուղեւորեանց իրաւարարական միջամտութիւնը վերջնականապէս կարգադրելու համար հայկական խնդիրը :

Մեր մասին բոլորովին եւ անկեղծօրէն կուսակից ենք այդ իրաւարարութեան :

Աշխարհ համօրէն, Պ. Նախագահ, ձեր եւ ստորագրող միւս տէրութեանց որոշումներէն կակընկալէ վախճանն այն շարչարանքներուն, որոնք այնքան տխրեցուցին մարդկութիւնը այս պարտումէջ, ուր, իրենց կրած անուան արժանի բոլոր վեհապետները իրաւամբ յափշտակուած են իրաւութեան, Արդարութեան, Ազատութեան եւ Յոռաճիղիմութեան խտէպէն, որ իրենց ուժը կը կաղմէ եւ անոնց ամենէն մաքուր փոքր կը պարտասէ :

Խնդրեմ, հաճեցէք ընդունել Հայրապետութեան Պ. Նախագահ ամե-

նախորին յարգանացս եւ անկեղծ անձուերութեանս հաւատարին :

ԳՈՒԻՏՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ Արխաթազուն Իշխան Հայաստանի

ՕՏԱՐ ԿԱՐՄԻՔՆԵՐ

Սօֆիա հրատարակուող «Բօլիթիչէսքա Սօբօթա» պուլկարբերէն թերթին մէջ կը կարդանք հետեւեալը :

«Խորին վայրոյթով կարգացինք «Պուլթիթիկ» թերթին մէջ Պատրաստուելիք վերնագրի ներքեւ յօդուած մը : Այդ տողերով, ուր կարգ մը յեղափոխականներ պատմական գէւքերը յեղաթիւրելու լուստակութիւնը ունին, ա՛հ թէ ի՛նչպէս կը դատեն հայերու մղած հերոսական կռիւը : «Մամք մատնանիշ կընեն Հայաստանը, որուն զոհերը լաւ արդիւնք չը տուին : Լաւ, բայց պէտք չէ մտնալ այս երկու երկիրներու կացութիւնը : Մակեդոնիա չը կրնար ըլլալ այն ինչ որ եղաւ եւ է Հայաստան : Մակեդոնացի պուլկարը՝ անասլի հայը չէ : Հոն, Հայաստանի մէջ շարք միայն կար, եւ ո՛չ կռիւ : Յեղափոխութիւնը քիչերու գործ էր միայն, իսկ ազգը՝ ամբողջ ձեռնպահ կը մնար եւ հայերը կը մտրթէին ոչխարներու պէս : Միթէ կարելի՞ է ընդունել որ մեր աչքն ալ թոյլ պիտի ընայ որ զինքն ալ մորթեն ոչխարաց հօտի մը պէս . . . »

Փոխանակ հիանալու հոյ գործիչներու անմահ յիշատակին առջեւ, որոնց թիւը «քիչերո» չէր, սաւը, հարիւր չէր, այլ հազարաւոր, փոխանակ հայ նահատակներու բանակին առջեւ գլուխ խոնարհեցնելու, այն նահատակներու, որոնք վճռեցին վրկուել կամ մեռնել եւ գործադրեցին այն մեծ նշանաբանը «ազատութիւն կամ մահ», մեծ ցաւ է մեզ տեսնել թէ դանուեցան յեղափոխականներ, հայկական յեղափոխութեան կարեւորութիւնը նսեմացնելու ձգտումներով զինուած, յեղափոխութիւն մը, որ նիւթապէս օւրարոյսպէս ինկած Սուլթան Համիտի կայսրութիւնը գըրգեց : Անոնք կը համախմբուին՝ նսեմացնելու ազատութեան սիրուն համար կուռող հայ ազգի լուսաւոր յիշատակը, այդ ազգը նմանցնելով ոչխարաց հօտի մը, որ կերթայ մորթուելու . . . :

Այդ յեղափոխականները մոռցան միթէ՞ փառապանձ Զէյթունը, ուր հայեր պաշարեցին ամբողջ թրքական բանակ մը, զիմակալեցին շաբաթներով ու մինչեւ իսկ ամբարնով, եւ վերջապէս պատուով ու փառքով դարակեցին : Մեր յեղափոխական եղբայրները գոնէ այնչափ վեհանձն ու համեստ չեն, որ խոս-

տովանին թէ՛ եթէ մակեդոնացիները պատրաստ ըլլային հայերու ըրածին գոնէ մէկ չորրորդը ընելու, այն առեն իրաւունք կուենար հրճուել ամէն ազատասէր սիրտ : Մակեդոնացիք կուուելու համար պէտք է վոխ առնու հայերու արիւնթիւնն ու արթնութիւնը : Հայերու, որոնք զրկեցին մահը գերութեան ազատուելու համար : Ազգ մը, հայ ազգի պէս, որ յեղափոխութեան դրօշակը պարզեց թուրքիոյ սրտին՝ Պոլսոյ մէջ, Երլուրը քէօշիկ պա՛ւերուն տակ, կը համիմատեն ոչխարաց հօտի մը հետ . . . :

«Ո՛ր ժամանակներ, ո՛ր բարբերո՛»

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. Պոլիս, 4 Յունի.

Երեկ շնորհիւ ըմբիշ Արսէն վարդապետի նմանը չտեսնուած խայտառակութիւն մը պատահեցաւ մեր հեկեղեցիին բակին մէջ : Մէկ քանի օրեր առաջ Պատրիարքարանէն հեռագիր եկած էր Տ. Սարգիս քահանային թէ հրատարած Թաղ. Խորհուրդը պարտի շարունակել իր պաշտօնավարութիւնը ստանալու օրերու աթիւն, մինչ նոր տնօրէնութիւն : Մյս հեռագիրին վրայ թաղական Խորհուրդը մէկ շաբաթի համար ձկը վերստանձնէ իր պաշտօնը : Քայն պաշտօնանպէս կը ծանուցանէ ժողովուրդին : Նաեւ պաշտօնական յայտարարութեամբ մը կը զեկուցանէ ժողովուրդին թէ Թրոնեղի սուրբ ուն քահանայ պիտի պատարագէ : Այս յայտարարութիւնը փայցուելէն անմիջապէս յետոյ Արսէն վարդապետ կեղէն եւ իր իսկ ձեռքերով կը պատուէ զայն : Թաղական Խորհուրդը աստեղապիւրը կուզայ նոր ուղղ մը փակցնելու : Արսէն վարդապետ կարգիլէ եւ ահագին սպասակ մը կիլիցնէ ատենադպիրին : Այս վերջինը աւելի ստրատափելի հարուած մը կուտայ վարդապետին ամբողջ գէմքին, այնպէս որ կը սկսի արեւն վաղել : Վարդապետին ակնոցը կը կոտրի : զխաղկը կը թաւալի եւ գէմքին վրայ վերքեր կը բացուին : Այս անակընկալ հարուածէն կատուած, Արսէն վարդապետ րէվոլվէրի կը գիմէ, բայց եկեղեցւոյ ամբողջ ժողովուրդը կը հասնի եւ արգելք կը լայ նորագոյն հարուածներու փոխանակութեան : Վարդապետը զայրացած ամբոխին վախէն, իր սենեակը կը քաշուի :

Ժողովուրդը հաւաքուելով անեակին առջեւ ցոյց մը կընէ վարդապետին գէմ : Իրաւաբաններու մէջ գտնուած եւ չը գտնուած բոլոր ամականները կը թափուին վարդապետին գլուխին : Բայց վարդապետը կը պոռայ թէ ինք ո՛չ թաղական Խորհուրդ, ո՛չ ազգային մարմին, ոչ Պատրիար-

քարան կը ճանչնայ, այլ թէ ինք է ազգը, եւ ահա երեւակայական յեղափոխութեան եւ շրջանակին Բ. համայնքի անօթի աւարտալը և. շրջանակի ընդհանուր ներկայացուցիչը, Վարդանանցի օրուան հերոսներով մէկտեղ, հեւալով կը հասնին, բայց կը տեսնեն թէ ամէն ինչ լրացած էր:

Ողբերգութիւնէ յետոյ կարգը կուգայ կատակերգութեան միջնակի ազգային գործերու մէջ:

Հանրածանօթ թրքումուրը, և ուրիշ շոյ աղաներ ժողով կը գումարեն և Արսէն վարդապետը կը հաշտեցնեն ասանազպիրին հետ և կարգ մը օրոշումներ կուտան: Թողական Խորհրդոյ ատենադպիրը կրնայ ներքի վարդապետին, կրնայ հաշտուիլ անոր հետ, բայց ազգը չըբէք չը հաշտուի և իր պատիւը կը պահանջէ վարդապետէն և անոր մէկ բանի համախոհներէն:

Յոհաննիս (Աւետիկոս) . 28 Դեկտ.

Քաղաքիս բողոքական ազգայինները, դեկտ. 27ի երկուշիկին Մննչեան տօնին առթիւ հանգանակութիւն ընելով 120 թաւեր գոյացուցին: Այս դրամը, որ պիտի յատկանայ Բողոքական օրակատար վանքի ազգային օրանոցին, առ այժմ ձգուեցաւ պանդան, և յարմար ատենին պիտի զրկեն Պօթո՞ղո՞ք երկրեան ընդհանուր գանձապետին: Սրբապետի աւելի աղաչով, երպով իր տեղը հասնի:

Տեղիս ազգայինները գլխաւորաբար կը զբաղին երկրագործութիւնով, և մաս մըն ալ բանուորութիւնով: Դժբախտաբար մեր աշխատաւոր գասակարգի մէջ շատ համերաշխութիւն չը տիրէր, մանաւանդ երկրագործներուն մէջ, և իրարու հետ մըրցելով մէկմէկու շատ քիսա կը հասցնեն:

Մեր ազգայինները այդինքն մշակութիւնը իրարու ձեռքէ խլելու համար վարձքերը կը բարձրացնեն և տեղացիներէն որ միշտ կօգտուի նախորդ տարուան կրկինը վարձ ընդունելով, մինչդեռ իրենք, աշխատողները շատ անգամ բերքերու նուազութեան և գիներու անկման պատճառով կամ ընտանեօք բարձր գինէրի աշխատած կըլլան և կամ իրենց ունեցած փոքրիկ գրամագուլիւր վրայ կուտան: Օտարները զուանքով կը գիտեն մերիններու իրարու հետ ունեցած աս մըցումը, և շատ սխալ դատարար մը կը կազմեն հայու ազգասիրական և ընկերային գործակցութեան մը յանդէսը, որով միայն կարող

պիտի ըլլան արդիւնք մը հանել իրենց շարաշար աշխատութեանէն:

ՏՕՔԹԵՐ Ա. ԱՌԱՔԱՆԵՆ

Հիւանդ կընդունի ամէն օր առաւօտեան ժամը 8-10 և կիս օրին յետոյ 4-6, իր բնակարանին մէջ, 4րդ բաղ, Տրակոման վողոց, քիւ 18:

Աղիւսները արի:

ԱՐԻՒՆԱՆԵՆ ՍԻՔԻՆԿ ՍԸ

Անցեալ դեկտեմբերի 27 ին Տօպրիչի մէջ տեղի ունեցաւ ժողովրդային գումարում մը՝ այժմեան կառավարութեան գործունէութեան դէմ բողոքելու համար:

Թէև Պուլկարիոյ շատ մը քաղաքներու մէջ ալ եղան միեւնոյն գումարումները, լուսեցան միևնոյն բողոքի ձայները, սակայն Տօպրիչի միթիւնկը առաջինն էր իր տեսակին մէջ: Այնտեղ մարդու արիւն վաղեց: Պուլկար քաղաքացի մը, որ շորս զաւակներու հայր էր, սպաննուեցաւ պուլկար ոստիկանի մը զնգալով, իսկ ուրիշներ սուրի հարուածներ, զնգալի վէրքեր ստացան: Եւ մենք աւելորդ չենք համարել այդ մասին մի քանի համառօտ տեղեկութիւններ հաղորդել մեր ընթերցողներուն:

Կանխաւ տպուած կոշիկով մը համաձայն իրբու ժողովատեղի գործուած էր «նասարուան» հըրապարակը, ուր «եզի կունենային ընդհանրապէս Տօպրիչի բոլոր այդ տեսակ գումարումները: Սակայն այս անգամ տեղւոյն ստաի, անպատու ուղեց արդիւնք և ժողովուրդը հրաւիրեց հաւաքուիլ մի ուրիշ տեղ, իսկ վերջինը, որու կարծիքով անյարմար էր ոստիկանապետին ցոյց տուած տեղը և ապօրինի անոր պահանջը, սխատ հասարակ իր որոշած տեղը: Ոստիկանապետ ուղելով իր կամբը յարգել ալ անպատճառ՝ հրացանաձգութեան նշանը տուաւ իր 20ի չափ զինեալ ոստիկաններուն՝ նախ ինք արձակելով իր ընկալիչը՝ մօտակայ օթեւանի մը պատուհանէն: Եւ այդ միջոցին Սէլաֆիլմ նիքթօթի անուն մակեղոնացի խոյս տալու համար տեղացող զնգալի տարափէն, գիմաջի կողմը անցնելու ուղեց և դէմ առ դէմ գտնուեցաւ հեծեալ ոստիկանի մը հետ, որ ընկալիչի մէկ հարուածով զետիւն տապալեց զայն: Ազգայիններ բարձրացան թէ «մարդ սպաննեցին», սակայն ժողովուրդը չը թողոց իր դիրքը և ոստիկանները ցրուեցան մուխի պէս: 5,000ի մօտ քաղաքացիներ և շրջակայ գիւղացիներ գրաւեցին հրապարակը:

ՏՕՔԹԵՐ Զ. Ս. ՓԱՓԱՆԵՆ

ԱՍՍՄՆԱՐՈՅԺ
ՎԱՅՅԵԼ ԲԱՐՁՐ ԱՍՍՄՆԱՐՈՅԺ
ՎԱՐՈՒՄԻՆ

Հիւանդ կընդունի ամէն օր առաւօտեան ժամը 9էն մինչեւ երկուշիկին 5 իր բնակարանին մէջ Տրակոման վողոց, 1206, Մուսայրա:

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ՄԻՆՁԵՒ ԿԷՍ ՕՐ

ՔՐՈՆԻԿ

Բարիպէ մեզ ուղղուած մասնաւոր նամակէ մը կը տեղեւանանք թէ տեղւոյն հայ գաղթականութիւնը Տ. Սուրբաս վարդապետի պաշտօնանկութիւնը պահանջներ է, մատրան հոգաբարձութեան: Վարդապետը ծննդեան տարեգարձին առթիւ օսմ. գեապանա ունը շնորհատրական այցելութիւն մը տալու քմահաճոյքը ունեցած էր. բան մը որ զաղ-

ւոր վիւղացի երկրագործ մը և իր կարտուած արիւնթաթախ ձեռքը ցոյց տալով ժողովրդին՝ ըսաւ. «ահաւասիկ խոշոտուած ձեռք մը, որ երկիրը պիտի հերկեր իրեն և իրեններուն ապրուստը հանելու համար...»: Եւ կռուեցայ Բերթի մէջ՝ պաշտպանեցի հայրենիքս, սակայն զերթ մնացի թշնամոյն զնգալներէն... և երբեք մըքս չէր անցնել թէ կրնայի օր մը իմ կըբայրներէն կտրուիլ ու սպաննուիլ... անոր համար որ ուղեցի բողոքել աւերքերու ծոնրութեան և երկրին գէշ կառավարութեան դէմ...»

Ամբօխը յուզուած էր և լսելէ վերջը նաև ուրիշ ատենաբաններ տուաւ հետեւեալ որոշումները.

- 1. Կը խնդրենք նորին արքայական բարձրութիւնէն չը վաւերացնել արեւելեան Բուլկարի երկաթուղիները վարձելու մասին տրուած որոշումները.
- 2. պաշտօնէ հեռացնել այժմուս ապիկար կառավարութիւնը.
- 3. անմիջապէս պաշտօնանկ ընել և ձերբակալել ոստիկանապետ մարդասպանը և 4. միթիւնկի դիւանի մըլոցաւ հաղորդել մեր այս որոշումները Ն. Ա. Բ. Իշխանին և մամուլին:

Նոր միթիւնկը վերջացան ամբօխը շրջապատեց իր ձառք արտասանուեցան և դիւանին ու ամբօխին լուսակարը տունուցաւ: Ոստիկանապետը պահուած էր օթեւանին մէջը՝ պաշարուած սպաննուածին ազգականներէն և ամբօխէն մինչեւ ժամը 3, երբ հասան զինուորական իշխանութիւնները, ժողովուրդը «հուրադներով ընդունեց զիրենք և ազգայինց «կեցցէ բանակ»: Եւ յետոյ դիակը, օթեւանը և հրապարակը զինուորականներէ գրաւուելով խաղաղութիւնը վերահաստատուեցաւ:

Հիւանդ կընդունի ամէն օր առաւօտեան ժամը 9էն մինչեւ երկուշիկին 5 իր բնակարանին մէջ Տրակոման վողոց, 1206, Մուսայրա:

ՔՐՈՆԻԿ

Բարիպէ մեզ ուղղուած մասնաւոր նամակէ մը կը տեղեւանանք թէ տեղւոյն հայ գաղթականութիւնը Տ. Սուրբաս վարդապետի պաշտօնանկութիւնը պահանջներ է, մատրան հոգաբարձութեան: Վարդապետը ծննդեան տարեգարձին առթիւ օսմ. գեապանա ունը շնորհատրական այցելութիւն մը տալու քմահաճոյքը ունեցած էր. բան մը որ զաղ-

թականութեան մէջ ծայրայեղ դժգոհութիւն առաջ բերած է: Կըսուի թէ հոգաբարձութիւնը ստիպուել է տեղի տալ գաղթականութեան պահանջին առջեւ:

— Երկար ատենէ ի վեր Բարիպայրոյ Է. անուն անձը, որ բողոքական եւրոցացի աղջկան մը հետ ամուսնացած էր, սակեց ամիս մը առաջ զաւակներով մէկտեղ իր կնոյն ո՛չ միայն կրօնքն այլ և ազգութիւնը ընդունել է: Բողոքական ըլլալը հոգ չէ կը գրէ մեր թղթակիցը, արդէն անհաւատ մը ըլլալով հաւատացեալ մը պիտի դառնար, բայց ազգութիւնը ուրանալ, ահա՛ ինչ որ նողկալի է:

— Անահիտէն կիմանանք թէ Տր. Պօղոս Գօլօթեան, որ Բարիպի Բժշկական Ակադեմիային ներկայացուցած էր աշխատութիւն մը յիմարաբուժութեան վրայ, յաջողած է արժանանալ, նոյն մըցմանը մասնակցող մէկ քանի ֆրանսացի գիտնականներու հետ, Պայետո՞՞է մըցանակին:

— Եգիպտոսի Յառ. տ'Ալէքսանդրի լրագրին մէջ կը կարդանք թէ Հայ Յ. Իսահակցութեան Գահիրէի կոմիտէն ևս նոյն քաղաքին մէջ ի նպաստ կրէտացուց կատարուած գումարման առթիւ շնորհատրական նամակ մը յղել է նախագահին: Յունական ընդհ. հիւպատոսը և հանդիսին նախագահ Պ. Սինատինօ իրենց շնորհակալութիւնը յայտնելով, պատասխաններ են թէ հելլենները անկեղծօրէն փափաքող են հայ ազգին բարօրութեան և թէ հայոց ըրած զոհողութիւնները յաջողութեամբ պիտի պսակուին:

— Կ. Պոլսէն կը գրեն «Ս. Բէթր. Վէտօմօնթի լրագրին, իբր թէ քանի մը հայ ընտանիքներ Թուրքիայէն գաղթելով Պարսկական սահմանազուխը և իսլամանալով ընդունել են «չիա» դաւանութիւնը: Անոնք կազմեր են «որոտ» անունով ընկերութիւն մը և սկսել են թշնամական գիրք բռնել Թուրքիոյ դէմ: Այս պատճառով տարածայնութիւններ են ծագել թուրք և պարսիկ կառավարութիւններու մէջ:

— Օրմանեան պատրիարք շրջաբերական մը զրկած է գաւառներու առաջնորդներուն, քեղապահներուն և փոխանորդներուն, յանձնարարելով որ հոգ տանին, որպէսզի օտար որբանոցներու մէջ գտնուած հայ որբերը թէ եկեղեցական արարողութիւններէ և թէ կրօնական ուսումներէ չը զրկուին: Իսկ Եթէ տեղ տեղ գտնուին տեսուչներ, որ շընդունին իրենց պահանջները, կը խնդրէ որ իմացնեն պատրիարքարանի, որպէսզի փութայ պէտք եղածը զորո՞ք դնել:

— Դաւրէթի մէջ կը փորձուի լոկ հայ գրամատէրներէ բաղկացած գրամատուն մը հիմնել

25,000 անդլ. ոսկի դրամադրամով: Այս խորհուրդը լսելով, Պարսկաստանի կայսերական Պանքա- յին (նազիրական) նախկին տնօ- րէն Մր. ձօն Բասթիլի, յիշեալ դրամատէրներն ի ժողով դու- մարեր և առաջարկեր է որ ի- րեն հետ ընկեր ըլլան, դրամա- գլուխը բարձրացնեն 75,000 ու- կիի, որուն մէկ քառորդէն քիչ մը աւելին ստորագրեն Թուման- եան նշարները: մէկ վեցե- ըրորդ բաժինը ինք, մնացեալը միւս տունները: Հիմա կըստատի Թումանեան եղբարց հաւանու- թեանը:

—Պարսկահայ այն թեմերուն մէջ, որոնք հոգևոր հովիտնը չունին և ըջուած վիճակի մէջ են, բողոքականութիւնը զգալի յառաջդիմութիւններ կրնէ ե- ղեր:

—Մանթաշեան և ընկ. Բագուի նաւթին գործերը վաճառուած են Պեղարսպուրկի խումբ մը դը- րամատէրներու 22 միլիոն ռուպ- լիի փոխարէն:

—Հայոց պարտիքներն պաշ- տօնապէս հաղորդուած է թէ կա- ռավարութիւնը կը նուիրէ հա- յոց այս տարուան ուրբը: Կ'ե- րեւի թէ Սուլթանը ներշնչուած է այս անգամ ֆրանսական ծա- նօթ մէկ առածէն, որ կըսէ. «Հոն ուր ոչ ինչ կայ, թագաւորն ալ կը կորսնցնէ իր իրաւունքը»:

—Բարբերի կուսակալութեան պաշտօնավարութիւն մէջ երեւցած է հրամանագիր մը, որուն հա- մեմատ հետեւեալապէս գունդ մը պիտի հաստատուի Տէրսիմի Բրդաբնակ սանճաքի լեռնային մասին մէջ, և այդ հետեւեալա- զօրաց գունդը պիտի կոչուի «Հա- միտիէ»:

—Բայց որովհետեւ Տէր- սիմի այդ մասին քերտերը մին- չեւ ցարդ ու է սուրբ վճարած չեն և կատարելապէս անկախ ապրած են, կը մնայ անհեղ թէ ո՞ր աւտիճան պիտի յաջողի թուրք կառավարութիւնը իր այս նոր կարգադրութեան մէջ:

—Թմբազրութիւնս, փոխա- դարձ բարեմաղթութիւններով իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ բոլոր անոնց՝ որ հա- ճեցան շնորհատրել իրեն նոր տարի:

Ա Ձ Դ

Մննդեան ասօնին պատճառով չորեքշաբթի օր «Շարժում» չի հրատարակուեցաւ:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Սըրինկֆիլաի (Ամերիկա) Ֆը- րանգ Ամերիկեան վարժարանին աշակերտող Սեբաստացի Պ. Արամ Ս. Զարգարեան, երկար ատենէ ի վեր իր եղբոր նամակ չէ գրած: Այդ երիտասարդը ճանչցողնե- րէն կը խնդրուի որ հաճին ի- րենց ունեցած տեղիկութիւն- ները հաղորդել խմբագրու- թեանս:

ՄԱՅ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱԷԻ

Վերջին պահուն Բարիպէն և կամ թղթակցութիւն մը կրիմա- ցընէ թէ նոյնպէս նախկին նա- խարարապետ նուպար փաշա մե- ռեր է յունուար 1ի գիշերը, մար- մինը գմբուելով Եգիպտոս պիտի փոխադրուի, առանց Բարիպի մէջ կրօնական ու է արարողութիւն կատարուելու:

Բարիպի հայ գաղթականու- թիւնը արծաթապատ պսակ մը զրկեց. ինչպէս նաեւ ուսանողու- թիւնն ալ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ԳԵՐՄԱՆՆԵՐԸ ԽՈՂԱՂԱՅՈՒՄԻ ՄԷՋ

Սամա կղզեխմբին՝ գերման հիւպատոսը Գոնկաերթալով Խա- զաղականի Արեւմտեան մասին մէջ, ընդ կառավարութեան զեկուցում ըրեր է որ Գերման- իա պիտի գրաւէ Վալաօ կղզին, որ Գոնկա կղզեխմբին ամենէն բեղմնատու մասն է, և թէ Գոն- կաի կառավարութիւնը յանձն չառնէ վճարել իր ընդհանրուն անհասական պարտքերը, գեր- մանացի վաճառականներուն: Գոնկայի կառավարութիւնը մեր- ժեց ու է պատասխանատու- թիւն, ըսելով թէ երկրին օրէն- քը չի ներեր որ կառավարու- թիւնը իր ընդհանրուն մասնա- տու պարտքերը վճարելու հա- մար վարկ բանայ:

Այս լուրը հաղորդող հեռա- գիրը կաւելցնէ թէ կղզեխմբին թագաւորը կոչում ըրեր է Մեծն Բրիտանիոյ, Միացեալ Նահան- գաց և Ֆրանսիայ:

Այս խնդիր փոքրիկ շփում առաջ պիտի բերէ Գերմանիոյ և Լինդլիոյ մէջ:

Գոնկա կղզեխումբը կը վերա- բերի այն «Բարեկամական» կոչ- ուած կղզեխումբերուն, որոնք խաղաղականի մէջ կերպով մը կը գտնուին բրիտանական զե- րակչու ազդեցութեան և պաշա- պանութեան ներքեւ:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ՓԻԼԻՊԻՆԻՆԻ

Փիլիպինի ապստամբները ան- համաձայնութեան մէջ են Միացե- եալ Նահանգներու հետ, և ար- դէն իրարու զէմ թշնամական գործողութիւններ սկսած են:

Մանիլայէ եկած լուրերը կը- ան թէ, Էլո Իլոյի մէջ ընդհան- րը պաշարեցին գետի մը բե- րանը, և մաս մը ամերիկացի զօրքեր, որոնք կը փորձէին ցա- մաք ելլել, ստիպուեցան ետ քաշուիլ:

Հոնկ-Քոնկէ եկած լուր մը կըսէ թէ ամերիկացի կամաւորները կը մերժեն կռուել ապստամբնե- րուն զէմ: Մատրիտի մէջ հե- տաքբերութեամբ կը գիտեն ա- մերիկացիներուն վիճակը Փի- լիպիններուն մէջ: Բնու չեն

կարծեր որ ամերիկացիք յաջո- զին գործին վախճանը բերել, որովհետեւ նախահանգիտները գրաւել ետք պէտք պիտի ըլլայ ահագին բանակներ զրկել ներ- սերը բռնելու համար:

Մանիլայի մէջ ընդհանրը կը մերժեն ու է գործ կամ առեւ- ստուր ընել Ամերիկացիներու հետ, որոնք չեն կրնար բան- ջարեղէն կամ մրգեղէն գտնել: Վաշինգթոնէն «Հէրալտի» քաշ- ուած հետագիր մը կը հաղորդէ թէ, Միացեալ Նահանգներու նախագահը Մաք-Քիթի Նրաւի- րած է Ամիթալ Տէվէցի, զօրա- պետ Ուիսին և ուրիշներուն, որպէսզի մտնածողով մը կազ- մեն ուսումնասիրելու համար Ֆիլիպինները. և իրենց կար- ծիքը յայտնեն թէ Միացեալ Նահանգները ի՞նչ քաղաքակա- նութեան պէտք է հետեւեն հոն: Կը կարծուի թէ Գերմանիա մտտ ունի այդ խառնակութիւն- ներու մէջ:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Թուրքիա՝ քաղաքական շար- ժումներու առաջին անգամը հա- մար խիստ հակողութեան են- թարկեր է պոլիարալան սահ- մանադրուելու: Մէկ սահմանա- գլուխէն միւսը անցնելը արդիւ- ուած է: Կը վախցուի որ այդ խիստ հակողութիւնը քննու- ճողականական յարաբերութիւն- ներու:

—Բ. Կրան ցանկութեան հա- մեմատ. պուլկար կառավարու- թիւնը Ռուսչուքէն Ռուսմանիա աքօրբեր է Մէհմետ Թէվֆիկ պէյն ու Խալիլ Մէնաֆօվը, ու- ետնք կը պատկանէին Երիտա- սարդ Թուրքիոյ կուսակցութեան:

—Սուլթանը իրաւէով մը վա- լերացուցած է զինուորական յանձնաժողովին որոշումը: Ռազ- մամթերքներու գնման մասին հետեւեալ քանակութեամբ, 162 արագահարուած թնդանօթ, 7 1|2 սանթիմիզը արամազով, 20,000 մազկէրի բազմահարուածեան հը- րացան, դաշտային և լեռնային թնդանօթներու ումբեր, ևն. և այլն:

—Էսթէրհազի հրամանատար Բարիկ հասեր է վճարել կտե- նին ներկայանալու համար:

—Վերջնականապէս որոշուած է Ձէնընկեցութեան համաժողովը գումարել Պրուսէլի մէջ:

ՎԱՐԴՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱՆ ԿԵԱՆՔԻԺ)

(Գին 1 Ֆրանկ)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպի Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուքէ հայկ Մայիս- եանի սրճարանը:

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 9 Յունուար

ՊՈՂՏԱՅ
Վառնա, լիպրա 55—58, Կէթ. 9.40—10.60
Արապա, լիպրա 55—60 Կէթ. 9—12 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 42—50 Կէթ. 6.40—6.80 ֆրանք

ՄԻՍԻՐ
Վառնա, 55—57 լիպրա, 6.10—6.20
Առապա, 55—60 լիպրա, 6.40—6.80
Կիւնկէ 15—20 վառն, 25—30 առապա կէթ. 6.40 Կէթ. 6.80

ՏԱՐԸ
Կիւնկէ 1|2 արապա կէթ. 6.40 Կէթ. 6.80
58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք
Առապա մուամէլէսի Խարօլէն 21 ֆրանք հիսապը իւլ տիր.


ՐԱԶՄԱՎԷՊ
Ա Մ Ս Ա թ Ե Ր
57րդ Տարի
Տարեկան գին՝ 10 ֆր. — 4 ռուպ- լի. — 2 Տուրք.
Հասցէ՝ Բէտաքսիոն տը լա ուրվու- Բազմազէպ. Ս. Լազար:
Վերնիկ (Իթալի)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տէր Ղեւոնդ Ք. Փափազեանի հայերէն—առեմանիէն տարե- ցոյցը, պատկերազարդ և ճոխ պարունակութեամբ. Գինն է թղթակազմին 1 ֆր. լաթա- կազմին 1.50 և փառակազմին 2 ֆր.:

Գինն է հեղինակին, կալաք:

ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆ



Եթէ կուզէք հոգնել ձեր չիկներ որոնք իրենց վրայ միացուեն ձեր իւր քիմաց- կուսութեան կատարելու- թիւն եւ մանաւանդ գինի չափաւ- րութիւն, առանց վարանելու գիմ- ցէք Ստեփան Խորասանճեանի Մու- սալա, բաղնիք փողոց, հաճի Հասան Էֆէնտի օթիլիին սակ. հաւատացէք թէ ստիժէն պիտի օգտուիք:

Տ Պ Ա Ր Ա Ն
ԱՐԵՒԵԼԵԱՆ
Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ
Վ.Ա.ՈՒՍԱ
Սեւրոց քաղ. Երբէկեալ փողոց.
Սագալը Զեովի կից.
Կը տպագրուին հայերէն, պուլկարե- րէն, գաղղիերէն, յունարէն, ասորերէն, և այլ լեզուներով պայտան, հոսթե- տան. հարանիկան հրատարակող, ալ- դարարութիւն, նամակազէպ, պահա- րան, մահազգ. վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք, լրագիր, և այլն:
Գումար եւ ոսկեգօծ զարդարնե- րու համար ամէն լեզուէ ճոխ տարե և մասնաւոր գործիքներ կը գտնուին:
ՄԵՍ ԽԱՄԲ ԵՒ ՄԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳԻՆԵՐԸ ՅՈՅԻ ԳԻՆԻՍԱՍՏԵԼԻ
Ռուսչուքէ և Կիւնկէ լեզուներով:
Отговорникъ: А. СУКЯСОВЪ.
Печантида „Взаимность“, Варна